ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Ստելլա Մելքոնյան, ՀՀ ֆինանսների նախարարության բյուջետային գործընթացի համակարգման վարչության հանրային իշխանության առանձին մարմինների գծով բյուջետային ծրագրավորման բաժնի գլխավոր մասնագետ.

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ք. Լյուբլյանա (Սլովենիայի Հանրապետություն), 2024 թվականի հոկտեմբերի 7-11-ը:

3. Հրավիրող կողմը.

Նիդերլանդների Թագավորության ֆինանսների նախարարություն.

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

5. «Բյուջեի կատարման կառավարչական հաշվետվողականություն» /Managerial Accountability for Performance Budgeting» թեմայով աշխատաժողովի նպատակն էր Նիդերլանդների Թագավորության օրինակով քննարկել ծրագրային բյուջետավորման առավել արդյունավետ մեխանիզմները, զարգացնել և խորացնել գիտելիքները ինչպես ֆինանսական կառավարման, վերահսկման արդյունավետության բարձրացման, այնպես էլ բյուջետային ծրագրերի կատարման վերաբերյալ կազմվող հաշվետվությունների ուղղություններով:

6. Քննարկված թեմաները.

Աշխատաժողովի ընթացքում, մասնավորապես, քննարկվել են հետևյալ թեմաները.

1) Հաշվետվողական բյուջեի բարեփոխումները Նիդերլանդներում,
2) Ծրագրային բյուջետավորման նկարագիրը,
3) Լավագույն կիրառելի ցուցանիշները,
4) Կառավարչական հաշվետվողականություն,

5) Կենտրոնական ներդաշնակության միավորի (CHU) դերը և վերջինիս առաջադրանքները,

6) Արդյունավետության գնահատման առանցքային ցուցանիշի (KPI) հետ կապված բարեփոխումները (Սլովակիայի օրինակով),

7) Վարժություններ և լուծումներ KPI-ի հետ կապված:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Դասընթացի ընթացքում առանձին հանդիպումներ և ելույթներ նախատեսված չէին:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Դասընթացի ընթացքում որևէ որոշումների ընդունում կամ փաստաթղթի ստորագրում նախատեսված չէր:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Դասընթացի ընթացքում ձեռքբերված գիտելիքները և Նիդերլանդների Թագավորության հանրային ֆինանսների կառավարման ուսումնասիրությունը լայն հնարավորություն ստեղծեցին ծանոթանալու միջազգային լավագույն փորձին, որոշ կարգավորումների մասով քննարկելու դրանք ընթացիկ աշխատանքներում կիրառելու նպատակահարմարության հարցը:

Ստորագրությունը, ամսաթիվը:

16.10.2024թ.